

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԽՈՒՄԲ

ՄԱԿ-ի մի շարք գործակալություններ պարտավորություն են ստանձնել ներառելու գենդերային հարցերն իրենց ծրագրերում և կառույցներում: ՄԱԿ-ի բարեփոխումների գործընթացում գենդերային հիմնահարցերը շրջադարձային դեր են խաղում, և ՄԱԿ-ի Երկրի թիմը վճռականորեն է տրամադրված այդ թեման իր գործունեության շրջանակներում արձարծելու հարցում: ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի (ՄԱԿԶԱԾ) գենդերային տեսանկյունից զգայուն մշակումն ու իրականացումն ենթադրում է, որ հայաստանյան գրասենյակը լրջորեն կարիք ունի կազմավորելու գենդերային հարցերի համար նախատեսված աշխատակազմ և ապահովելու այն փորձագետներով ու տեխնիկական աջակցությամբ:

ՄԱԿ-ի զարգացման աջակցության երկրորդ ծրագրի (2010-2015թթ.) շրջանակներում գենդերային հավասարության հարցն արձարծվում է գործակալությունների արդյունքների ավելի քան մեկ քառորդում, որի նպատակն է հիմնարար կերպով անդրադարձ կատարել գենդերային հավասարության հարցերին: Մասնավորապես, երկու գործակալությունների արդյունքներում բարձրացվում է համագգային և տեղական կարողությունների խթանման հարցը՝ գենդերային հավասարության, կանանց կարողությունների զարգացման և կանանց հանդեպ բռնության դեմ պայքարի նպատակով: Առանձին գործակալություններ արդեն իսկ կատարել են առաջին քայլը՝ նշանակելով հատուկ աշխատող գենդերային հարցերով զբաղվելու համար:

Առաջարկվող Թեմատիկ խումբը պետք է դառնա հենահարթակ կարողությունների հզորացման համար ՄԱԿ-ի Երկրի թիմի համար՝ ապահովելով տեխնիկական աջակցություն զանազան գործակալություններին, ՄԱԿ-ի մշտական համակարգողին, առանձին թեմատիկ և համակարգման այլ խմբերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՀԿ-ն նույնպես կարևորագույն տեղ է հատկացնում գենդերային հիմնահարցերին, ինչպես մատնանշվում է ԵԱՀԿ գենդերային միջոցառումների ծրագրում և ներառված է գենդերային ուղղորդման գործողություններում, Թեմատիկ խումբն աջակցելու է նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակին՝ իր իսկ աշխատանքի գենդերային ուղղվածության խորացման նպատակով և Հայաստանում իրականացվող գենդերային միջոցառումներին աջակցելու նկատառումներով, այդ թվում նաև կանանց տնտեսական և քաղաքական հզորացումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գենդերային հարցերին առնչվող օրենսդրության իրականացումը, որի նպատակն է բարձրացնել մարդկանց իրազեկությունն ու մասնակցությունը խտրականության, գենդերային բռնության և սեռական ոտնձգությունների դեմ տարվող պայքարում:

Թեմատիկ խումբն առաջատար դեր պետք է կատարի ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և այլ զարգացման գործընկերների՝ Հայաստանին աջակցության ծրագրերի համատեքստում գենդերային հեռանկարների պարբերական և արդյունավետ արձարծման գործընթացներում, հատկապես Հազարամյակի զարգացման

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԽՈՒՄԲ

նպատակների համատեքստում: Համապատասխան պայմաններում Թեմատիկ խումբը պետք է դառնա երկխոսության և համատեղ ծրագրերի, ռազմավարությունների ու միջոցառումների մշակման արդյունավետ գործիք: Թեմատիկ խումբը ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի համակարգերում պետք է դառնա ազատ քննարկումների ֆորում և համագործակցի զարգացման գործընթացներում ներգրավված այլ մասնակիցների հետ, այդ թվում գենդերային տեսանկյունից զգայուն զարգացման ծրագրեր իրականացնող դերակատարների՝ դոնոր գործակալությունների, կառավարության և հասարակական կազմակերպությունների հետ:

Գենդերային Թեմատիկ խմբի ստեղծման նպատակն է խթանել և աջակցել գենդերային հիմնահարցի ներառումը Հայաստանի զարգացման օրակարգում, զարգացման գործընկերների գործունեության մեջ և համատեղ ծրագրերում որպես խաչաձևվող հիմնահարց, հետևել գենդերային հավասարության հիմնահարցին աջակցության ծրագրի շրջանակում, խթանել գենդերային տեսանկյունից զգայուն զարգացման ծրագրավորման առավել խորն ընկալումն ու պարտավորվածությունը, ստեղծել տեղեկատվության, փորձի, գիտելիքների և գործիքների պարբերական փոխանակման միջավայր:

- See more at: http://www.un.am/am/Gender_Theme_Group#sthash.qA0eurP0.dpuf